ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Ալիսա Թանյան, Մակրոտնտեսական քաղաքականության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի ավագ մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, ք. Վիեննա, 2025 թվականի մարտի 24-ից ապրիլի 4-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Դրամավարկային քաղաքականություն/ Monetary Policy (MP)» թեմայով դասընթացին, որի շրջանակներում ներկայացվել են տարբեր փոխարժեքի ռեժիմների առկայության դեպքում դրամավարկային քաղաքականության հնարավոր ուղղությունները և ազդեցությունները մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Դասընթացը միտված է դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատմանը, տարբեր երկրների և փոխարժեքի տարբեր ռեժիմների առկայության դեպքում փոխանցումային մեխանիզմների ուսումնասիրությանը:

5. Քննարկված թեմաները՝

1. *Դրամավարկային քաղաքականության դերը.* Դրամավարկային քաղաքականության շրջանակի ուսումնասիրություն. առավելություններ և թերություններ,
2. *Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմները.* իրական հատվածի փոփոխականների՝ մասնավորապես ՀՆԱ ճեղքի, գործազրկության, գնաճի և այլ անվանական փոփոխականների վրա ազդեցության գնահատում,
3. *Կանխատեսումային համակարգ.* կանխատեսումային համակարգի և քաղաքականության վերլուծության հիմնական բաղադրիչները, դրա անհրաժեշտությունը,
4. *Դրամավարկային քաղաքականությունը ֆիքսված փոխարժեքի ռեժիմի դեպքում.* սիմուլյացված տվյալների վրա դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի ուսումնասիրություն, առանձին երկրների օրինակի վրա դիտարկում
5. *Դրամավարկային քաղաքականությունը լողացող փոխարժեքի ռեժիմի դեպքում.* սիմուլյացված տվյալների վրա դրամավարկային քաղաքականության

փոխանցումային մեխանիզմի ուսումնասիրություն, առանձին երկրների օրինակի վրա դիտարկում,

6. *Դրամավարկային քաղաքականությունը ֆիքսված և կարգավորվող փոխարժեքի ռեժիմի դեպքում.* սիմուլյացված տվյալների վրա դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի ուսումնասիրություն, առանձին երկրների օրինակի վրա դիտարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի շրջանակներում նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են քննարկումներով և գործնական կիրառություններով՝ հնարավորություն տալով ավելի խորը ուսումնասիրել հարկաբյուջետային քաղաքականությունը և դրա ազդեցությունը մակրոտնտեսական միջավայրի վրա:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

9 ապրիլ, 2025թ.